



«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» հասարակական կազմակերպություն

Երևան, Փ. Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ: (37410) 580219, 563363, (37494) 40 46 24, ֆաքս: (37410) 581102, E-mail: [info@hetq.am](mailto:info@hetq.am), [hetq@hetq.am](mailto:hetq@hetq.am), URL : [www.hetq.am](http://www.hetq.am)

11.02.2014թ.

ՀՀ Արմավիրի մարզպետ  
Աշոտ Ղահրամանյանին  
«Հետք» թերթի լրագրող  
Գրիշա Բալասանյանից  
Հեռ. 093-82-26-80

Հարգելի պարոն Ղահրամանյան.

Խնդրում եմ տեղեկացնել, թե՛

1. Այս տարի շուկայականից մատչելի գներով քանի՞ տոննա պարարտանյութ եւ դիզելային վառելիք է հատկացվելու գյուղացիներին, ինչ գնով եւ պայմաններով:
2. Գյուղացիները դժգոհում են, որ այս օրերին պարարտանյութի գումարները կանխիկ են հավաքվում, իսկ իրենք ձմռանը կանխիկ գումար չունեն եւ զրկված են մատչելի գնով պարարտանյութ գնելուց: Արդյոք այս հարցը բարձրացվել է մարզպետարանում կամ կառավարությունում:
3. ՀՀ վարչապետը մի քանի անգամ այցելել է մարզի Աղավնատուն համայնք եւ բոլոր հանդիպումների ժամանակ գյուղացիները բարձրացրել են Հովտամեջ գյուղի սկզբնամասից մինչեւ Աղավնատուն տանող մարզային նշանակության ճանապարհի վերանորոգման հարցը: Այս տարի վերանորոգվելու է ճանապարհը, եթե ոչ, ապա ինչ քայլեր են ձեռնարկվում:

Կանխավ շնորհակալություն

Դիմող՝ Գրիշա Բալասանյան

ՀՀ ԱՐՄՈՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ  
 Կողմից թիվ 094/7648-14  
 12 02 2014թ.